

Միրելի մայրեր, քույրեր և կանայք,

ջերմորեն շնորհավորում եմ մարտի 8-ի՝ կանանց տոնի, կապակցությամբ:

Այս կարևոր ու անսահման սիրով լի տոնը մշտապես գեղեցկացրել է մեր իրականությունը: Կանայք հայոց պատմության բոլոր ժամանակներում նեցուկ են եղել ոչ միայն մեր պետականությանն ու երկրին, այլ նաև հանդիսացել են հայ ընտանիքի կայունության գրավականը:

Նվիրումի այս դրսևորումն աննախադեպ է, որը միտված է հայկական ավանդական ընտանիքի պահպանմանը: Միայն կանայք կարող են ընտանիքի հոգսերի ահռելի բեռ վերցնել ու միաժամանակ մնալ համակրելի ու գեղեցիկ:

Միրելի՛ մայրեր,

երախտագիտությունս եմ հայտնում յուրաքանչյուրիդ ձեր հանդուրժողականության ու հայրենասիրության համար, որովհետև ձեր զավակներին սոված դաստիարակությունն ու կրթությունն է, որ ուժեղ է պահում մեր պետականության հիմքերը:

Շնորհավորում եմ բոլոր կանանց անհատապես տոնի կապակցությամբ ու մաղթում եմ բազմաթիվ հաջողություններ, խաղաղություն ու անսպառ ընտանեկան ջերմություն:

Հարգանքով,

Վահրամ Խաչատրյան